

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրլի, կէս տարվանը 6 բ.
Աւանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редація «Мшакъ».
կամ Tiflis Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոդուկտայով Մշակ ստանում ենք սեփա
կան ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 բուրլի է, վեց ամսվանը 6 բուրլի.
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԻ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւ
նում, Թամաշեկի տանը).
Կարողութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս
ցէով. ТИФЛИСЪ, Редація газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour
nal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Հարկատու չէ անտարբեր լինել. — ՆԵՐԳԻՆ ՏԵ
ՍՈՒԹԻՒՆ. Մի նոր օպերայի ներկայացումը. Հայ
ուսուցչի. Հայաստանի հնագիտական ուսումնա
սիրութիւնը. Նամակ էջմիածնի. Նամակ կար
սից. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱ
ԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բիսմարկի քաղաքականա
թեան անկման սկիզբը. Արտաքին լուրեր. — ԽՍՈՆ
ԼՈՒԿԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱ
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՐԿԱՆՈՐ ԶԵ ԱՆՏԱՐԱԲԵՐ ԼԻՆԵՆ

Յայտնի է որ մեր երկրին հարեան եր
կիրներում խօշոր է երեւոյն. Արդեօք
Պարսկաստանում է նա աւելի տիրապե
տում, թէ Միջագետքում. այդ մեզ հա
մար առ այժմ որոշ կերպով յայտնի չէ:
Սակայն մենք գիտենք թէ մեր հարեան
երկրներում երեւոյն այդ սարսափելի
հիւսնադրութիւնը, կարող է անցնել և մեր
երկրի սահմանները և սկսել մեզ մօտ էլ
իր հունձը հնձել:

Տեղական վարչութիւնը, ինչպէս լրագրի
ներքից յայտնի է, մի բժիշկ է ուղարկել
Պարսկաստան, խօշորայի բնակչութիւնը
ուսումնասիրելու և նրա տարածման շրջա
նը ճիշդ կերպով որոշելու համար: Բայց
մեզ զարմացնում է մի բան, այդ այն ան
տարբերութիւնն է, որով վերաբերում են
գէպի խօշորայի յայտնվելը բոլոր երօպա
կան երկրները: Չէ որ խօշորան, Պարս
կաստանից գէպի Անգրիովկաս անցնելու
դէպքում հեշտութեամբ կը կարողանայ
այստեղից անցնել ոչ թէ միայն գէպի
Բուսաստան, այլ Բաթումից կամ Փո
թիից և դէպի Եւրոպան:

Եւրոպական կառավարութիւնները, որոնք
ահագին ծախսեր են անում դիւանագի
տութեան (գրկութան) վրա արեւել
քում, պահելով արեւելեան երկրներում
դիւանագիտական հիւսնադրութեան ահագին
և մեծածախս շտապները, — մեր կարծիքով
աւելի լաւ կանէին շարունակ պահելու
արեւելեան երկրներում բժշկական մշտա
կան յանձնաժողովներ: Այդ տեսակ յանձ
նաժողովներ կարող էին միջազգային լինել:
Չը պէտք է մոռանանք որ խօշորան կամ
ժանտախտը միշտ մի տեղ կայ ասիական
երկրներում. այս տարրի այդ հիւսնադրու
թիւններից մէկը նշանակում երեւում են գի
յութ Միջագետքում, վաղը Բաղդադում,
մէկ էլ օրը Պարսկաստանի այս ինչ մա
սում, և այլն...

Մարտիկ այդ տեսակ վարակիչ, համա
ճարակ հիւսնադրութիւնների դէմ երբ նը
րանք արդէն մեծ ընդարձակութիւն են
ընդունել և լայն շրջանում են տարած
վել. — շատ դժուար է և նոյն իսկ անհա
րին է: Այն ինչ խնդրել նրանց տեղն ու

տեղը, նրանց ծագման աղբիւրի մօտ, նոյն
իսկ նրանց երեւոյնը բնական. — անհամե
մատ աւելի հեշտ է Այդ է պատճառը,
որ քաղաքակիրթ եւրոպական երկրները
պէտք է շարունակ իրանց հաշուով պահէ
լին բժշկական յանձնաժողովներ արեւելեան
երկրներում, որոնք իսկպէս խօշորայի և
նրա նման հիւսնադրութիւնների հայրենիքն
են համարվում:

Թող վերջապէս հասկանան եւրոպական
քաղաքակիրթ երկրները, որ խօշորայի ե
րեւոյնը վտանգ է սպառնում ոչ թէ միայն
ասիական կիսակրթ երկրներին, բայց
նոյն իսկ և եւրոպային: Թող հասկանան
վերջապէս եւրոպական երկրները կառա
վարութիւնները, որ պէտք է հիմնվեն բժշ
կական և առհասարակ ուսումնական, մաս
նագիտական մշտական միջազգային
յանձնաժողովներ, որոնց վրա ծախսվելի
զաւաճաւորները ապարդիւն ծախսեր լինելու
չեն, և որոնք անհամեմատ աւելի օգուտ
կը բերեն թէ արեւելքին և թէ քաղաքա
կիրթ աշխարհին, քան թէ դիւլօմատիա
կան մեծածախս և իրապէս ապարդիւն
հաստատութիւնները:

Վերջացնում ենք մեր խօշոր կրկնով
որ խօշորայի պէս հիւսնադրութեան դէմ
կռիւլը և նրան խնդրելու ու ոչնչացնելու,
անհամեմատ աւելի հեշտ է հիւսնադրու
թեան նոյն իսկ ծագման բնական և նրա
երեւոյնը տեղի վրա, քան թէ նրա դէմ
մարտաւելը այն ժամանակ, երբ նա արդէն
մեծ շրջանում կը տարածվի, և աւելի
կընդարձակվի: Այն ժամանակ կարող է և
ուշ լինել:

Գ. Ա.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆՈՐ ՕՊԵՐԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Յունվարի 23-ին Թիֆլիսի թատրոնում առա
ջին անգամ ներկայացվեց Բիզէի «Les pecheurs
de perles» (Մարգարիտ որսողներ) երեք գոր
ծողութիւններից և չորս պատկերներից բաղ
կացած օպերան: Այդ օպերայի լիբրետտոն ուս
սերէն լեզուով թարգմանել է Թիֆլիսի Ա. Տիւր
մեմիկայան: Թիւսերէն լեզուով օպերան կրում է
«Искаатели жемчуговъ» վերնագիրը:

Ֆրանսիացի Բիզէի գեղեցիկ, սպանիական,
կամ աւելի լաւ է ասել՝ արաբական, մերթ մե
լամադիկ և մերթ կըրտո եղանակների ոգով
ներշնչված երաժշտութիւնը արդէն յայտնի է մեր
հասարակութեանը, զխաւորապէս «Կարմէն» օ
պերայից: Բայց պէտք է խոստովանվի, որ «Կար
մէն» օպերան անհամեմատ աւելի ինքնուրոյն և
նոր եղանակներ է պարունակում իր մէջ, քան
թէ «Մարգարիտ որսողներ» օպերան: Այդ
վերջին օպերայի բովանդակութիւնը կատարելա

պէս առասպելական լինելով և գործողութիւնը
Յէյսոն կղզու վրա կատարվելով, — երաժշտութիւնն
էլ տեղ տեղ կրում է բուն արեւելեան եղանակ
ների բնակչութիւնը. բաւական է յիշել տէնօրի
«արիան» առաջին գործողութեան մէջ, որին
դաշնակցում են զխաւորապէս ջութակները,
նոյն գործողութեան մէջ տէնօրի և բարիտոնի
«դուէտը» և նմանապէս երկրորդ գործողութեան
մէջ սոպրանոն և տէնօրի «դուէտը» (որոնց պէտք
է դաշնակցէ արֆան, իսկ մեզ մօտ արֆայի
բացակայութեամբ պիտան է դաշնակցում): Սա
կայն, կրկնում ենք, «Մարգարիտ որսողներ»
օպերան առհասարակ աղքատ է նոր երաժշտա
կան գաղափարներով, չունի «Կարմէն» օպերայի
հարուստ, ինքնուրոյն, տպաւորութիւն գործող և
լսողի յիշողութեան մէջ տպաւորվող, յիշողու
թեան մէջ անջնջելի կերպով դրոշմվող եղանակ
ներ: Նոր օպերայում (մեզ համար նոր) տիրա
պետում են զլիւարապէս խօսքի և երգերը,
թէ և մեծ մասամբ չափից դուրս հանդիսաւոր
բնակչութիւն կրող եղանակներով: Վերին աս
տիճանի շնորհալի է միայն երկրորդ գործողու
թեան վաւեր եղանակով երգվող խօսքի և
երգը:

Օպերայի բովանդակութիւնը խիստ ողբերգա
կան լինելով՝ մեր կարծիքով երաժշտութիւնը
տեղ տեղ չէ համապատասխանում բովանդակու
թեան ողբերգական նիւթին, իսկ տեղ տեղ, ընդ
հակառակն, նոյն իսկ գործողութեան սկզբում, —
չափից դուրս աղմկալի է:

Ամբողջ օպերայում, բացի խօրից մասնակցում
են չորս գործող անձինք միայն. այս անգամ
մասնակցում էին՝ Թիֆլիսի Բոսսի և պ. պ. Տար
տակով, Վանդերլի և Բեդիկով: Այդ երգչները
միայն Թ. Բոսսի և պ. Տարտակով անյանդիմանե
լի կերպով մինչև օպերայի վերջը տարան իրանց
դերերը, այն ինչ պ. Վանդերլի ձայնը դար
ձեալ մի քանի անգամ կտրվեց, իսկ պ. Բեդիկ
ով, ինչպէս միշտ, մարդու ջղերի վրա անա
խորձ կերպով էր ներգործում իր շարունակ դո
ղացող, շարունակ վերբացել աշխարհի նկարի
ված բարոյականութիւնը:

Այս անգամ թատրոնը կատարելապէս լի էր:
Բառի բուն նշանակութեամբ Թատրոնական
վարչութիւնը բարեհաճեց հանգէս դուրս բերել
մի քանի նոր և աշող զննորացիներ և, ինչ որ
աւելի էլ զարմանալի է, բարեհաճեց թէ զլիւս
ւոր դերակատարներին և թէ խօրիսաներին՝
հագնել նոր, նոյն իսկ շքեղ և գործողութեանը
յարմար զգեստներ...

Ի վերջոյ մի նկատողութիւն օրինաւոր կառա
վարից պ. Բարբիէին. խորհուրդ կը տայինք պա
րն նուագապետին ի չար չը գործածել իր նը
ւագապետական փայտը: Երեւի յոյս դնելով Բիզէի
երաժշտութեան անչափ աղմկալի լինելու վրա,
և մի և նոյն ժամանակ յոյս չը դնելով օրկեստրի
ներդաշնակ ածելու վրա, պարտքը կարծում է որ
մենք, լսողներս, չենք նկատի, որ նա իր նուա
գապետական փայտը շարունակ և անողորմ կեր
պով գրակալին զարնելով է զննվարում օրկես
տրը:

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Ուսուցչութեան պաշտօնը ամեն ազգերի մէջ և
ամեն ժողովրդի համար համարված է եղել ու
այժմ էլ համարվում է որպէս մի վսեմ, բարձր և
ազնիւ պաշտօն: Այս բանը խոստովանվել են ա
մենք, սկսած ամենանշանաւոր մարդիկներից:

Իսկպէս, որ գործը կարող է այնքան վսեմ
լինել, որքան ուսուցչութիւնը, քանի որ դպրոցն
է, որ ուսուցչի շնորհով, հիմք է դնում մարդկա
թեան առաջադիմութեան և զարկ տալիս քաղա
քակրթութեան գործին:

Մի օրպէ ընդունել թէ դպրոցներ չը կան, բո
լոր ուսուցչիները հեռացել են ինչ կը լինի ար

դեօք մարդկութեան դրութիւնը, ով կը տարած
գիտութիւնը, ով կը կրթէ սերունդները, ով կը
պատրաստէ մամուլին զեկավարող և նրան ըն
դունող հասարակութիւն, ով կը վարի այն
հողը, որի վրա բարի սերմերը աճում են,
ով արդեօք մարդկութեանը կը տայ այն մեծ
հանձնարները, որոնք ի բնէ օժտված լինելով
զարգանում են դպրոցներում: Համարձակ կարող
ենք ասել, որ ոչինչ չէ կարող փոխարինել դպրոց
ներին: Չը կան դպրոցներն ու ուսուցչիները, — չի
մշակվի մանուկ սերնդը մտաւոր հողը, որի վրա
պիտի ցանվեն ու զարգանան շատ օգտակար և
բարի սերմեր:

Որքան մեծ նշանակութիւն ունի ուսուցչիչը բո
լոր ազգերի համար, թէ է ոչ աւելի, քան նոյն
քան մեծ նշանակութիւն ունի ուսուցչիչը և հա
յերիս համար: Հայերս դուրս ենք ուրիշ կրթող
միջոցներից. մեր դրակաւութիւնը թէ և պարու
նակում է իր մէջ քիչ թէ շատ հեղինակութիւն
ներ, բայց անմատչելի է մեր ժողովրդին, մա
մուլն էլ դեռ ևս մոտ չէ գործել բոլոր խա
ւերի մէջ. միայն դպրոցներն են, որ ա
մենից շատ տարածված են և ուսում, գիտու
թիւն են տալիս ժողովրդին: Կրկնում ենք, ուսու
ցչիները աւելի նշանակութիւն ունեն հայերիս
համար, քան լուստուր ազգերի համար:

Բայց ցաւելով պիտի ասենք, որ ոչ մի տեղ
ուսուցչի պատիւն այնքան բնական չէ, որքան
հայերիս մէջ: Հայերիս համար ուսուցչի ձայնը
իր իսկական կշիռը չունի և նա իր դիրքի վրա
չէ:

Սրա պատճառը մասամբ մենք ուսուցչիչներն
ենք. մենք մեկուսացած կեանք ենք վարում,
չըմո կերպով չենք անակապցում հասարակական
գործերին, մենք մեզ համար որոշ չըջան ունեն
նալուց յետոյ՝ այնտեղից դուրս չենք գալիս, չենք
ծանօթանում և մեր ձայնը լսեցնել չենք տալիս
միւս, մեր չըջանից դուրս եղողներին, այլ չըջանե
րին, երկրորդ՝ մենք պարսպած ենք ինտրիգանե
րով և վատ օրինակ ենք հանդիսանում այն հա
սարակութեան առաջ, որի մէջ կոչված ենք տէր,
համարաշխութիւն ձգելու: Մեր ուսուցչիչները մի
և նոյն գաղափարով չեն ողորդված, այլ մեզա
նից իւրաքանչիւր իր տեսակ է հասկանում այդ
առաքարիւղում գործելու նշանակութիւնը, ուղում
ենք ասել, որ մեզ ուսուցչիչներին ոչ մի միացնող
կապ չը կայ և մենք միասին մի որոշ դասակարգ,
հասարակութիւն չենք կազմում:

Մեր կարծիքով անհրաժեշտ է, որ ուսուցչա
կան ապարիգում գործողները մի մարմին կազ
մէին, ունենային մի դրօշակ, դէպի ուր լիքված
լինէր բոլորի ուղարկութիւնը...

Ինչ ներգործութիւն ունի ժողովրդի վրա օ
րինակը, ուրեմն ամեն ազնիւ գաղափարի օրի
նակը մենք պիտի տանք: Փայլք քանի անգամ
մեր մէջ խօսել ու լսել ենք ժողովրդի օգուտ
ների մասին: Խորհուրդ ենք տուել ընկերութիւն
ներ հաստատել, խնայողական կասսաներ հիմ
նել, բայց մինչև այսօր ուսուցչիչներս չունենք մեր
խնայողական արկղը, չունենք փոխադարձ օգ
նութեան զրամագրութիւն և այլն:

Նախ պէտք է ինքներս մեր աչքում մեր դիրքը
բարձրացնենք, որ յետոյ ուրիշներն էլ այդ դիր
քը իր բարձրութեան վրա ընդունեն:

Իսկ դրան կարող ենք հասնել միայն մեր փո
խադարձ համերաշխութեան և հասարակութեան
համար օգտակար գործերում եռանդուն մաս
նակցութեան շնորհով: Բայց այդ յատկութիւնները
այսօր պակասում են մեզ:

Ուսուցչի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԳՐՈՒ ԹԻՒՆԸ

Անցեալ 1889 թւին Ֆրանսիացի ուսումնական
Ժ. դը-Մորգան (J. de Morgan) հրատարակեց
Պարիզում երկու մեծ հատարներ «Mission Scien-

tifique du Caucase» վերնագրով: Գա Պարսկաստանի, Հայաստանի և Վրաստանի պատմական-հնագիտական շատ հետաքրքիր ուսումնասիրություն է: Պ. զը-Մորգան փորձաքննել է արևելյան երկրի հին առեղծվածները և գերեզմանները և վերականգնեցել է այդ բոլոր երկրները, յատկապես Հայաստանի, զրաֆները պատմությունը: Հեղինակը, ինչպես երևում է, շատ լավ ծանոթ է այն բոլոր աղբյուրների հետ, որոնք այլ և այլ եւրոպական լեզուներով են գրված եղել, նմանապես մեր արևելյան ու հայոց հին պատմագիրների հետ, որոնք թարգմանվել են եւրոպական լեզուներով:

Մեր ձեռքը հասնւոյ պ. զը-Մորգանի հեղինակութեան երկու հատորներ (8—ծալ), որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է 200—300 երեսից: Հեղինակութեան առաջին հատորը կրում է «Les premiers ages des metaux de l'Arménie russe», իսկ երկրորդը՝ «Recherches sur les origines des peuples du Caucase» վերնագիրը:

Գրքը պատկերազարդ է: Հեղինակը հետազոտում է իր հետաքրքիր գրականությունը՝ Փոքր-Ասիայի, Անդրկովկասի և Կովկասի ազգերի պատմությունը, մանրամասն հետազոտութեան է ենթարկում այդ երկրների ազգերի գրաֆները և գեղարուեստի պատմությունը, և վերջապէս փորձում է պարզել ասորիների, պարսիկների, հայերի, աղուանների, վրացիների և մեր երկրի այլ ցեղերի ծագումը: Գրութեքի այդ վերջին մասում հեղինակը ներկայացրել է մեզ և Փոքր-Ասիայի, Անդրկովկասի և Կովկասի ազգերի լեզուների ծագման համեմատական ուսումնասիրությունը:

Այդ մասում մենք նկատեցինք հայոց բառերի արմատները բառական չօգտվելի աղաւաղումներ: Հեղինակը համաձայն է լեւորմանի այն կարծիքի հետ, թէ նախապատմական ժամանակներում Արմենիայում ապրում էր մի ցեղ, որը վրաց ծագումից էր և այժմեան վրացիք, օսեր, իւնեղներ, մինգրներ և այլն, —այդ հին ցեղի սերունդներն են: Գրքից հետոյ հետէ Արմենիայից յետ մղվելով հայերի ձեռքով, վերջ ի վերջոյ ապաստանեցան Սուրբ Բարսեղի շրջանի այն կողմը և կովկասեան սարերում, իսկ Արմենիան մնաց հայերին:

Հայերի և վրացիների գեղարուեստի ինքնուրոյն լինելուն հեղինակը թերահաւատութեամբ է վերաբերվում. այդ երկու ազգերի գեղարուեստը և ճարտարապետությունը զը-Մորգանի կարծիքով բնականորեն ծագումից են և դուրի են որ և է ինքնուրոյնությունից, թէ և հայերը և վրացիք իրանց փոխ առած գեղարուեստին և ճարտարապետութեանը, աւելացնում է նա, յատկապէս գեղարուեստի մանրամասնութիւններում: առեցին յայտնի չափով անհատական քնաւորութիւն:

Հեղինակութիւնը չափից դուրս մասնագիտական ուսումնական քնաւորութիւն ունենալով, բաւականաւոր է ենք այդ փոքրիկ նկատողութեամբ զը-Մորգանի աշխատութեան մասին, որը ի հարկէ, անհամեմատ մեծ արժէք ունի բուն ուսումնական շրջանների համար, քան թէ ընթերցողների մեծամասնութեան համար:

ՆԱՄՄԱԿ ԵՋՄԻԱՇԵՆՑ

Յունվարի 5-ին

Մի քանի օր առաջ Երևանից եկալ վաղարշապատ: Նոյն օրը գնացի այցելելու Էջմիածնի Գեորգեան ճեմարանը՝ տեսալ ճեմարանի հանդիսարանը, ննջարանը և հիւանդանոցը, ծանօթացալ ուսանողների պարապմունքների հետ:

Այսօր ճեմարանում ուսանում են 115 ուսանողներ: Վերջին նախաձեռնելից երկուսը ուղարկվել են արտասահման բարձր ուսում ստանալու, որոնք պէտք է աւարտելուց յետոյ վերադառնան Էջմիածնի ճեմարանում ուսուցչական պաշտօն վարելու, ամեն մէկը իր մասնագիտութիւնից: Էջմիածնի Ժրաբանութիւնը մտադրութիւն ունի 1890 թվ աւարտողներից կրկին ուղարկել արտասահման, եթէ նրանք անհրաժեշտ են իր աստիճանին: Եթէ նրանք համար միայն աստիճանաբանութիւնը չընտրելու իւր մասնագիտութիւնը զալու նախորդ օրը, առաւօտեան, ցնացի այցելելու Էջմիածնի վանքը՝ Նախ քան վանքի մէջ մտնելը երեսակալում էի, որ կը տեսնեմ վանքը շրջապատված հոյակապ շինութիւն:

Իմ այստեղ զալու նախորդ օրը, առաւօտեան, ցնացի այցելելու Էջմիածնի վանքը՝ Նախ քան վանքի մէջ մտնելը երեսակալում էի, որ կը տեսնեմ վանքը շրջապատված հոյակապ շինութիւն:

Ներով, մանաւանդ վեհաբանը, այն ինչ տեսալ միայն շատ հին խուցեր, ցած դռներով, փոքր լուսամուտներով և առողջապահական կէտից՝ շատ անյարմար բնակութեան համար: Ինքս ինձ հարց տուի, միթէ այսպէս պիտի լինի Էջմիածնը, և արդարացի է, որ տեսնողը մտածէ թէ մօտ 4 միլիոն հայ ժողովուրդը անկարող է նախանձելի դրութեան մէջ պահել իր եկեղեցու կենտրոնը:

Էջմիածնը այնքան եկամուտներ է ունեցել և ունի այսօր էլ, որ ինչէր քանի մասին մտածէր Էջմիածնի միաբանութիւնը, մինչև այժմ էլ կարող էր մարմարափոխ պատեր շարել և հոյակապ պալատներ կանգնեցնել: Իրոյանակ այժմեան խուցերի և աւերված պատերի... Արեւմտեան տեսնելու և Էջմիածնի տպարանը, որը տեղափոխվել է այժմեան կաթողիկոսի օրով պատրաստված նոր շինութեան մէջ: Տպարանում աւելացրած են նոր կատարելագործված ապագրական մեքենաներ: Ցանկացալ տեսնել թանգարանը, բայց օրովհետև թանգարանը ունի երեք բանալի, որոնցից մէկը գտնվում է կաթողիկոսի մօտ և երկու ուրիշ եպիսկոպոսների մօտ, և որովհետև կաթողիկոսը այդ օրերին տոյար էր, ուստի այդ հանգամանքը արգելեւ եղաւ ինձ թանգարանը տեսնելու:

Բ. Ար.

ՆԱՄՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Յունվարի 10-ին

Կարսի ժողովուրդը կարելի է բաժանել մի քանի դասակարգերի. դրանցից ինտելիգենտ դասակարգը մեծ մասամբ կազմում են ուսուցիչները, ծառայող դատակարգի փորձաւաստութիւնը և մի քանի հասկացող առևտրականներ: Մեր յիշած երեք դասակարգերին պատկանող ինտելիգենտ մարդիկ շատ մեծ ազդեցութիւն ունեն մեր այստեղի ժողովրդի վրա: Նրանք ինչ որ ուղենան, կարող են անել, որովհետև մեր ժողովուրդը խոնարհվում է նրանց թէ մտաւոր և թէ բարոյական ոյժի առաջ: Ուստի դրանք անհատկապ առաջատուներ պիտի համարուին մեր հասարակութեան մէջ: Բայց սրտից ցաւով խոստովանում ենք, որ ամեն ինչ հակառակ է կատարվում: Այստեղ ծառայողները և առևտրականները շատ քիչ են հետաքրքրվում մեր ժողովրդի գրութեամբ, ի հարկէ, լինում են բացառութիւններ. այնուհետև մնում է միայն ուսուցիչներին մտածել ժողովրդի գրութեան վրա: Վերջինների մէջ ևս գտնվում են այնպիսի անհատներ, որոնք անարժան են իրանց կամեան: Կարսի ինտելիգենտային մեծ մասը իր ազատ ժամանակը նուրբում է թղթախաղութեան: Ինչպէս երևում է, թղթախաղը էլ ինչ-ֆիլուէնցայի՝ նման շուտ փոխվող հիւանդութիւն է, որովհետև այստեղ շուտ մարդիկ են վարակվել դրանով: Վարակվել են տիկիներ և օրերներ, վարակվել են ուսուցիչներ, առևտրականներ, բժիշկներ և օֆիցերներ, վարակվել է ծառայող դատակարգի մեծամասնութիւնը և վարակվել են մինչև անգամ այնպիսի երիտասարդներ, որոնք միշտ բողոքում էին թղթախաղի և թուղթ խաղացողների դէմ:

Վարսում կանայք էլ մեծ առաջադիմութիւններ են անում: Ըստ ասված խաղը այստեղ վաղուց է որ մտնելուց դուրս է եկել: Մեր պատմական տիկիներն ու օրերները սկսել են թղթախաղով պարապել. նրանք շատ սիրում են խաղալ թղթի և լրամալ խաղերը: Խոսքը բացառութիւնների մասին չէ:

Մեր աղաւ-շինութիւններն ու աղաւ-վաճառականները միշտ վրդովւում են ու դարձանում մեր երիտասարդ գործիչներին և մեծ մասամբ մեր ուսանողներին վրա: Նրանց վրա անեղծներ են թափում, նրանց զանցաւ և անաստուած մասկանոցներ են տալիս և այլն: Այդ սօֆիստներն ասում են մեր նոր սերունդին նրա համար, որովհետև դրանք ամեն քայլափոխում հարուստում են նրանց, թէ այս ինչ առևտրականը վախառութիւն է անում, խեղճ ժողովրդի արեւին է ծծում, թէ՛ այն ինչ չինութիւնը կաշառք է ուտում, ամեն ինչ քանի համար են մեր երիտասարդ-գործիչները մեծ արդեւներ հանդիպում և աշխատում են մինչև անգամ կարելի իրանց բոլոր յարաբերութիւնները ժողովրդի հետ, որովհետև այդ աղաները մեր հասարակութեան վրա մեծ ազդեցութիւն ունենալով, կարող են ամեն զգալում զգալի վնասներ հասցնել նրանց:

Անցեալ 1889 թվին, երբ որ մեզանում բարեգործական ընկերութեան ճիւղը դեռ չէր բացվել, մեր երիտասարդները ճանաչում էին իրանց պարտականութիւնները: Նրանք զուգահեռ կախ առած գործում էին: Նրանք աշխատում էին մօտ յարաբերութիւններ ունենալ մեր հասարակութեան հետ: Բայց զարմանալիս այն է, որ այստեղացիք վառօդի պէս կաշող ու խոկոյն հանգչող մի նիւթի նման են: Անցեալ տարի մեր պարբերական թերթում շարունակ տպագրվում էր թէ Բարեգործական ընկերութեան ճիւղը բացվեց այս ինչ տեղում, այն ինչ տեղում, թէ թիֆլիսում գործակատարները ժողովներ են կազմում, որպէս զի խնդիրը տան այնտեղի քաղաքային վարչութեան, որ նրանց կերակրի և տօն օրերը աղատեն և այլն: Ահա տեսաւ մեր երիտասարդներն էլ ժողով են կազմում, որ աշխատեն մի կերպ անել այն բոլորը, ինչ որ կատարվում է թիֆլիսում, կամ ուրիշ քաղաքներում: Նրանք աշխատեցան առաջ են տանում իրանց ցանկացածը: Մինչև անգամ շատ քաղաքներ և առաջ մենք կարող ենք պարծենալ, որովհետև և մեր քաղաքը ունի Բարեգործական ընկերութեան ճիւղ: Մեր քաղաքում գործակատարները կերակրի և տօն օրերն աղատ են և այլն: Սակայն ես այսքան կասեմ, որ բանը նրանում չէ թէ մեր քաղաքում Բարեգործական ընկերութեան ճիւղ կայ, թէ մեր գործակատարները կերակրի և տօն օրերին աղատ են, այլ բանը նրանում է թէ կերակրի և տօն օրերին մեր գործակատարներն իրանց աղատ ժամերը քրտեղ պիտի անցկացնեն, չէ որ կարում չը կայ գտնել մի գրագրան-ընթերցարան, որտեղ մեր գործակատարները կարողանային իրանց ազատ ժամերը անցկացնել զբոսի և լրագիրներ կարդալով: Մեր երիտասարդները այդ բաները չեն ուղում հասկանալ: Նրանք կարծում են թէ ամեն բան արել պրծել են:

ՆԱՄՄԱԿ ԲԱՔՈՒՄԻՑ

Յունվարի 17-ին

Այս օրերս այստեղ մի ոճրագործութիւն է տեղի ունեցած, որի մասին աւելորդ չեմ համարում հետեւել մանրամասնութիւնները: Գաղտնիքը մեր պատմական լրագրին:

Վախի մօտ Գիւղէ դիւղից Յովհաննէս Նազարեան անունով մի հայ պանդուխտ, որ 12 տարուց յետոյ դուրս է եկել իր հայրենիքից և պաւստում է մշակութեամբ Ռուսաստանում, այդ յունվարի 1-ին անհետանում է: Նա 36 տարեկան է եղել և ունեցել է այսպիսի կին և մի դուստի: Կինը և նրա հայրենակից աղաքացիները նրա անհետանալու հետեւել օրերը շարունակ դիմում են ոստիկանութեան, բայց այս վերջինը բոլորովին ուշադրութիւն չէ դարձնում: Այն ժամանակ նրանք, իբրեւ թիւրքային հպատակ, դիմում են տեղին ընդհանուր հրապատօնին, որի միջնորդութեան շնորհով պոլիցիան փնտրում է անհետացեալին և երևան է գալիս, որ այդտեղ մի ոճիր է տեղի ունեցած, և ձերբակալում է 3 քրեւոր, որոնք կասկածելի են համարվում սպանութեան գործում: Հարցաքննութիւններից երևում է, որ յիշեալ վանեցին իր երկար պանդուխտութեան միջոցին յաջողել է 50—60 օտ. ոսկի գումարել իւրան համար, որով և մտադիր է եղել վերադառնալ հիւն: Եւ երեւային հետ հայրենիք: Չերեւակալած քրեւորներ յանձնվում են քննիչին, բայց վերջ ի վերջոյ հիմնական վաստ չը գտնելով նրանց դէմ՝ արդարութիւնն անպարտ է արձակում նրանց: Այս լսելով մէջից մի հայ պանդուխտ, խաջ Մկրտիչեան, ներկայանում է տաճարային հիւանդանոցի հիւանդ, որ անյայտացող ճանաչում է քրեւորից մէկին, որ անյայտացող Նազարեանին գիւղակիցներին է եղել և միշտ աշխատում է եղել նրա, Նազարեանի հետ, մօտ յարաբերութիւն ունենալ: Խաջն պատմում է, երբմամբ, որ այդ քրեւորը գիտեկալով, որ Նազարեանը մի փոքրիկ գումար ունի իրան համար հաւաքած, մտադրված էր սպանել նրան և վերադառնալ հայրենիք և միանգամայն պատրաստակարմութիւն է յայտնում վկայել և հաստատել իր ասածը: Գաղտնիքի առջև Այս քրեւորը բռնակալվում է եղել այստեղ առանց օրինաւոր անցադրի: Նա ունեցել է միայն միւս ուր թէ գործ էր մի, որ իրաւունք է տալիս ծածկաստանի ներքին գաւառների մէջ երթնելու: Եւ ոչ թէ արտասահման անցնելու: Բայց սահմանադրութեան վարչութիւնը ուշադրութիւն չը դարձ-

նելով թէ արդեօք ներքին անցագիր է դա թէ արտաքին, թոյլ է տուել քրեւորին անցնել ցամաքային սահմանադրութեան Արդուի մօտ Օրջոնիկեզի:

Ցաւալի պարագայ է, որ խեղճ մշակը 12 տարի չարչարվում է իր բնականից հետ պանդուխտութեան մէջ և հազիւ թէ աշտեցնում մի փոքր գումար պատրաստել իր համար, որ դառնայ հայրենիք, իր հոգի ու անդաստանը մշակելու, ահա չարագործութեան զոհ է գնում, զի՞ք որպէս հաստատօրէն կարծում է, քանի որ մարդը դեռ ես մէջտեղ չէ ելած, ոչ ինքն և ոչ իր վրեժն կրած գումարը: Իսկ նրա կինն ու երեխան տմենախաղալի վիճակի մէջ են գտնվում:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ-ՆԱՍԻՋԵՆԻԱՆ քաղաքից մեզ գրում են. «Մեր քաղաքը, զուրկ որ և է մասաւոր կեանքից, բարոյական, հոգեկան շահերից, անընդունակ որ և է գաղափարով հետաքրքրվելու, —քաղաքում է օդորմիլ, թշուառ, չնչին, ամօթալի ինտրիգանքով: Մի ժամանակ Նոր-Նասիջեանը բաժանված էր երկու որոշ կուսակցութիւնների: Խալիպաններ և Հայապետականներ... ձմարիս է այդ երկու կուսակցութիւնները անգունդ դուրսեցին մեր քաղաքը և հիմնադրեցին արեւիկա նրան, —բայց դարձեալ այդ կուսակցութիւնները, իրանց գործողութիւնների մէջ առաջնորդվում էին հասարակական գաղափարներով: Իսկ այժմ, դիտել թէ նոր-նասիջեանց հետաքրքրող ինչ է... մեր առեւտրական կուսակցութեան հետ գործերը, դիտել թէ քաղաքը երկու որոշ և միմեանց թշնամական կուսակցութիւնների վրա բաժանող հերոսը ով է, —այն կուրի բռնաշէնիկ... Այս, քաղաքը այն աստիճան բարոյապէս և մտաւորապէս ընկել է, որ մեր հասարակութեանը դաւադրեցնող ամենակարեւոր ինչորդը առեւտրական կուրսն է, և նրա բռնաշէնիկի պատճառով Նոր-Նասիջեանի ամբողջ հասարակութիւնը բաժանված է այժմ երկու հակառակ և թշնամի բանակների, իրար վերաբերմամբ երկու որոշ և կատաղի կուսակցութիւններ: Բռնաշէնիկի և հակառակ և հակառակ և չի կհան կուսակցութիւնների: Որքան ընկել է Նոր-Նասիջեանը...»

Ղրիմի ԱԿԻՆԵՐՄԱՆ քաղաքից մեզ գրում են. «Տեղին հայոց զորոցի հոգաբարձուների խորհրդով, ճաղաքալոյսի երկիցեան, մի երկու ուսուցիչներ լուստիս: Ման եկան մի քանի աշակերտներով: Այդ երկուցեան զոյացած գումարը հասնում է 108 բուրլու: Հնորակալութեան արժանի են նուիրատու պարսիները: Գաղտնիքի հոգաբարձուները կամեցան են ձեռք բերել արհեստաւորացի զարդաների պրօգրամը, արհեստները մեր զարդի մէջ մտցնելու համար: Ուղում են, նմանապէս, մի աղքատանոց հիմնել, բայց ոչ մի ուղեցոյց չունեն, որպէս զի ձեռք բերեն այդ տեսակ հաստատութիւնների կանոնադրութիւնը»:

ՍԱՍԻՔԱՆԻՑ մեզ գրում են. «Մտաւոր կեանքով աղքատ Աւիւարայի հասարակութիւնը, որը չէ մտածում ոչ զարդի, ոչ էլ մի այլ և որ և է օգտաւէտ հաստատութեան հիմնադրութեան մասին, կատարելապէս անասնական կեանքով է ապրում: Չարմանալի չէ, որ ամեն մտաւոր շարժումից զուրկ հասարակութեան շրջանում երևան են գալիս գաղափարաբոյ մարդիկ: Ամբողջ Աւիւարայը դաւալված է այս բուլէին այն դէպքով, որը նորերում տեղի է ունեցել այստեղ. մի երիտասարդ մարդ փորձ է անում մի 6 տարեկան աշակերտ րուսաբարեւոյ: Բարեբաղդաբար երեխան չէ վնասվում: Բունաբարողը բանտարկվել է, բայց չուտով նորից աղաւաղվել է ստացել 500 բուրլու գումարի գրաւակաւում: Եւ այժմ նա կրկին ազատ շրջում է քաղաքում: Ամբողջ քաղաքը այդ դէպքի մասին է խոսում... անսխնչով ենք մենք դաւալված»:

ՎԱՍԻՔԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ ջրօրհնից օրը այդ քաղաքի հայոց եկեղեցու քահանայները գանձանակ ժողովեցին քաղաքի աղքատ ընտանիքների անունով, բայց այսօր յունվարի 17 է, գրում է թղթակիցը, և որքան իմացանք՝ չքաւոր ընտանիքներից ոչ մին դեռ ես նիւթաւոր օգնութիւն չէ ստացել հանգամանակաւ գումարից: Իսկ ջրաւորութիւնը, ինչպէս նկատա-

լիսի, խորանի, խորանի, կիւղի և կրօն-
շաղկապ ընկերութիւնները ներկայացուցին իր
կազմակերպած յանձնաժողովին յանձնել, որ նա ման-
րամասնօրէն մշակի օժանդակող դրամագրութիւն
կազմելու նախագիծը և այն հարցը, որը վերա-
բերում է փոխադարձ ապահովութեան բերօյնին
ու նրա գործունէութեան սահմանները որոշելուն:

ՊԱՐԻՉ, 23 յունվարի 29 նայելով կառավար-
չական մամուլի հերքմանը, այստեղ շարունակ-
վում է պատվել այն լուրեր, թէ շուտով մի-
նիստական ճգնաժամ կը լինի, և թէ Տիրարի ու
կոնստանի մէջ տարաձայնութիւն է ծագել:

ԲԵՐԼԻՆ, 23 յունվարի Առևտրի նոր միջնա-
րի նշանակելը հետեանք է միայն իշխան Բիւ-
մարկի սեփական ցանկութեան՝ իր գործունէ-
ութեան շրջանը սահմանափակելու:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունվարի «Новое Время»
լրագիրը հաղորդում է, որ հանգուցեալ Բատկին
նշանակել է յօգուտ կանանց բժշկական կուրսե-
րի 20.000 ռուբլի, որ նրա կարգադրութեան
ներքոյ էր դրել նրա բարեկամներից մինը:—Սև
ծովի վրա նաւահանգիստ չինելու հարցի մաս-
նաժողովը՝ ձայների մեծամասնութեամբ նաւա-
հանգիստը Սևաստոպոլում չինելու կողմն է:

ՎԻԵՆԱ, 23 յունվարի: Սօփիայից հեռա-
դրում են, որ այնտեղ ճշմարիտ որ պատրաստ-
վում էր մի դաւադրութիւն, որի նպատակն էր
ձերբակալել կոռուբցեան պրինցին և Ստամբուլ-
ովին: Չորս օֆիցեր և մի քանի մասնաւոր տն-
ձիրք ձերբակալված են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունվարի: Սենատի քննական
վճռալից բաժնում, դատակարարային ներկայա-
ցուցիչները մասնակցութեամբ, սկսվեց Վլադի-
կովիչի նախագահական դատարանի նախկին նա-
խագահ Վլադիկովիչի և նոյն դատարանի հաշուա-
պահ Վլադիկովիչի դժբախտ ընկնելուն: Նրանք մի-
դարձում են աճուրդով ծախվող աւարականները
գնելու ժամանակ գործած զեղծումների համար:
Իսկ Պետերբուրգի նախնականական դատարանում
սկսվեց աշխուժական Նորմանկու գործի քննու-
թիւնը, որը մեղադրվում է Պարամոնով հովուի
սպանութեան համար:

ՊԱՐԻՉ, 24 յունվարի: Մեծ իշխան Նիկոլայ
Նիկոլաևիչը Աւագը շուտով Պարիզից կուղևորվի:

Նիցցա, ուր Նորին Բարձրութիւնը վիճակ է վար-
ձել:

ՎԻԵՆԱ, 24 յունվարի: Լվովից ստացված
տեղեկութիւններին համեմատ գաղտնիական նա-
խագահական սէյմի յանձնաժողովը քննում է՝ սո-
վեալ համայնքների համար Առևտրատանից հաց
բերել տալու առաջարկութիւնը: Ասում են, որ
լեհական կուրը աշխատում է բէլիստարից թող-
աւորութիւն ստանալ՝ ներմուծվող առևտուց հացից
մաքսահարկ չը վերցնելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՈՍԱ
Յունվարի 23-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծաթ —	90	70
Բեռլինի վրա 100 մարկ —	44	40
Փարիզի վրա 100 ֆրանկ —	36	—
Ռալի — արծաթ —	7	31
Մաքսային կուրսներ —	145	62
Արծաթ —	1	8
Բորսային դիվիդենդներ —	6	70/0
Պետական բանկի 5% տոմս 1-ին շրջանի —	99	62
— 2-րդ —	99	87
— 3-րդ —	99	62
— 4-րդ —	99	62
— 5-րդ —	99	62
— 6-րդ —	99	62
Նոր 4% —	86	—
Արևելական 5% փոխառութիւն 1-ին շրջ. —	100	62
— 2-րդ —	100	62
— 3-րդ —	100	87
Ներքին 5% առաջին փոխառութիւն —	242	75
— երկրորդ —	229	—
5 1/2% բէնտա —	102	25
Ռալիայի բէնտա —	164	50
Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ. —	—	—
Նոր երկաթուղային բէնտա —	100	—
5% գրաւակ — թղթեր կալուած —	—	—
փոխ. կրեդ. ընկ. մաս. —	135	25
— թղթաւոր. —	94	25
Գրաւ. թղ. Ա. զն. բանկի —	99	37
Գիւղական բանկի —	103	25
6% գրաւ. թղ. Թիֆլիսի — 27 և 43 տ. —	—	—
— Գրաւ. թղ. Թիֆլիսի — 18 և 43 տ. —	—	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օրին- գաւորներ —	95	62
Մոսկուայի քաղաք. օրինգաւորներ —	94	62
Օղէտայի —	96	87
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օր. —	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:	—	—

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՒ ԱՐՄԵՆԻՆԻ

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1890 г. НА
ТЕХНИЧЕСКИЙ СБОРНИКЪ
И
Вѣстникъ промышленности
ЕЖЕМѢСЯЧНЫЙ ЖУРНАЛЪ

открытый, изобрѣтений и усовершенствований по всеѣмъ отраслямъ промыш-
ленности.

Программа изданія:

1. Правительственныя распоряженія и узаконенія, касающіяся фабрично—заводской про-
мышленности, желѣзныхъ дорогъ и т. п. промышленныхъ предриятій.
 2. Машиностроение и механическое дѣло.
 3. Механическая технология,—ручная и машинная обработка металловъ, дерева, волок-
нистыхъ материаловъ и пр.
 4. Химическая технология.
 5. Желѣзнодорожный отдѣлъ.
 6. Архитектура.—Инженерное и строительное искусства.
 7. Электро-технический отдѣлъ.
 8. Санитарное дѣло.
 9. Кустарный отдѣлъ.
 10. Графическія искусства.
 11. Техническое образование.
 12. Обзорныя дѣятельности торгово-промышленныхъ учреждений и техническихъ обществъ.
 13. Критика и библиографія.
 14. Смѣсь: Технические замѣтки о новостяхъ техники, рецепты, совѣты, описанія различ-
ныхъ новыхъ составовъ и средствъ, патентованныя и секретныя средства и пр.
 15. Справочный отдѣлъ: вопросы и отвѣты; торговыя свѣдѣнія; статистическія свѣдѣнія;
данныя о спросѣ и предложеніи. Свѣдѣнія о новыхъ привилегіяхъ.
 16. Объявленія въ текстѣ и въ видѣ особыхъ приложений.
- Приложенія: чертежи, книги, брошюры спеціальнаго характера.
Примѣчаніе. Непремѣнное помѣщеніе въ каждомъ выпускѣ журнала статей по всеѣмъ от-
дѣламъ не обязательно.
Подписная цѣна: на годъ съ доставкой и пересылкой 16 руб.; на полгода—9 руб.
Адресъ редакціи: Москва, Малая Дмитровка, д. Алексѣевой. Редакторъ-Издатель Ученый Инже-
неръ-Механикъ

К. А. Казначеевъ.

Միակ
խոսական Ռիզայի
կուրսների խոսակ
ԲԱՆԶԱՄ
որի յատկութիւնը յայտնի է
աշխարհի բոլոր երկրներում և
չնայած է հանաչված բժշկական
Գեպարտամենտից 4869 համարով:

Մոսկվա 1882
Գոյութիւն ունի
1845 թիւից:

ՀԱՇՎԱՆ ԹԹԻՄՈՐ
սխիւնից պատրաստած:
ՍՊԻՏ և մաքրած ԳԻՆԻ
ԲՈՒՄ ԿՈՆԻԱԿ ԱՐԱԿ
զանազան օղիների և նաւաղանների
ՆԱԼԻՎԱՆԵՐ և ԷՍԷՆՑԻԱՆԵՐ
Փրանսիական օղի, կիւմէլ
արտասահմանեան լիկերների հայն:

Ա. ՎՕԼՅՇՄԻՏ, ԲԻԳԱ
Արժանացաւ բոլոր համալսարանային և այլ ցուցահանդէսներում ամենաբարձր պար-
գների:
Արդիւնները գտնվում են բոլոր գինեւիճառանոցներում:
Պրէյս-կուրսանները ուղարկվում են արժարձ:
7—10 (Հ.) 2 №

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՄՆԱՅԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ և իր ամուսին Թեհլի ՄԿՏՁԵԱՆ ՏԵՐ-ԳԱԹԵԱՆՅ-
ՆԵՐԸ սրտի ցաւով յայտնում են՝ առաջինը իր մօր և երկրորդը՝ իր սկեսուր ՀԵ-
ՂԻՆԷ ՄԵՍՐՈՒՅԱՆ ՏԵՐ-ԳԱԹԵԱՆԻ մահը և խնդրում են ազգականներին և ծա-
նօթներին շնորհ բերել յուզարկաւորութեան, որը կը կատարվի շաբաթ, յունվարի
27-ին, առաւօտեան 10 ժամին, Թանգոյեանի տանից (Վեփրամիւսկայա փողոց)
գնդի Մոզնու սուրբ Գէորգ եկեղեցին: Ամբիճքը կը կատարվի ուրբաթ, յունվարի
26-ին, երեկոյան ժամը 5-ին:

2—3

ՓԲԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՄԵՍԱՃԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ
MESSAGERIES MARITIMES

Հերթական և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձապէս
Սրանով պատու ունենք յայտնելու ընդհանուր դիտութեանը, որ հաստատված է
կանոնաւոր հերթական և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՈՆԻ, ՀԱՎՐԻ, ՄԱՐՍԷԼԻ, Կ.
ՊՕԼԻՍ և ԲԱԹՈՒՄԻ մէջ: Հողեմաները այդ երթևեկութիւնն անելով, մտնում են միջան-
կեալ նաւահանգիստները և ԲԱԹՈՒՄԻՅ զուրս կը դան ՏԱՍԵ ՕՐՎԱՅ ՄԷՉ ՄԷԿ ԱՆԳԱՄ:
ԱԼՖԷ (ALPHÉE) շողեմաւը, նաւապետ AUGÉ (ՕձԷ) առաջին ընթաց կանէ,
զուրս գալով ԲԱԹՈՒՄԻՅ, ուրբաթ օր, յունվարի 26-ին:
Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան ագէնտներին,
ԲԱԹՈՒՄ Գ. Էստէնօէրին,
ԹԱՅԼԻՍ՝ Գէորգ Հեջուբեան Հեջուբեանին,
ԲԱԳՈՒՄ՝ Գօլդուստ Էդալայրներին:

2—2

Անհրաժեշտ եմ համարում հրապարակով յայտնել ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՆԳԻԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻ ՊԱՏ-
ԻՆԼԻ ՎԱՃԱՍԿԱՆՆԵՐԻ, որ մեր կողմից կանգնում են, որ սկսված է 1883 թիւից շարունակվում
է: Դարձեալ սովորական համեմատ ընդունում եմ յանձնարարական պայմանով, ապրանքներ ստանա-
լու ու ճամբիկու հետեանք քաղաքներն. ՈՒՋՈՒՆ—ԱՂԱՅ, ՂԱԼԱՐՎԱԿ, ՍԱՍԱՐԱԹ, ՄԵՐՎ, ՉԱՐՏՈՒ,
ԱՍՈՒՐԻԱՐԱՅ, ԲՈՒՐԱՐԱ, և ՍԱՄԱՐՂԱՆԻ, որտեղ և ունեն կանտորներ, նոյնպէս և ԲԱԳՈՒ:
Նաև կատարում եմ ապրանքներ գնելու, ծախելու և ուղարկելու պատվէրներ:
Ցանկացողներն պայմանների մասին կարող են դիմել ինձ այս հասցեով: ՄՅՄԻՆԻ—ԱԼԲ—ԱԼԲ
Երտու Նազարով:

7—12

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԻԼԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՍԱՄԵՐԻ ՅԱԻՆ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԷՄ
ՊՐՈՎԻԶՈՐ ԱՍԱՄԵՐԻ ԿԱՐԻՆԵՐ 50 ԿՈԳ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈԿՈՆԵՆԱՆ ԱՍԱՄԵՐԻ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈԳ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍԱՄԵՐԻ ՓՈՇԻ 30 ԿՈԳ.

ԳԻՒԱԹՈՐ ՊԱՀԵՍ.
ԹԻՖԼԻՍԻՍԻ, Կովկասեան զեղա-
վաճառատան, և պ. պ. Շահ-
պարոնեանցի, Մակկերի, Սէնչի-
կովսկու և Ազուլուրի զեղա-
տներում: ԲԱԳՈՒՄԻ մէջ, Բեկկերի մօտ, ԲՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կօկօշկի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՍ՝
Բրօննոցկու մօտ և ԵԿԱՅԵՐԻՆՕԳՐԱՐԻՍ՝

УБНЫЯ КАПЛИ: КОГ. 50 К.
УБНОЙ ПОРОШОК: КОГ. 30 К.
УБНОЙ ЭЛИКСИР: КОГ. 80 К.
А. ШТЕКЕРЪ

48—52 (Հ.)

ՄԻ ԵՐԻՏՍԱՍԱՐԳ, որը հիմնաւորապէս ուսումնասիրել է ՀԱՇՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ
և ունի վկայական, ցանկանում է յարմար պաշտօն ստանալ: Հասցէն իմանալու համար
կարելի է դիմել «Մշակ» խմբագրատուն:

2—4

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամէն օր

ԱՌԱՌՕՏԵՐԸ
ԲՈՒԿՎՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԻՐԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՅ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԵՎՍԿԻ—11—12 ժ. աղանջի, կոկորդի, քիթի ց. և սիֆիլիսի (վիրարութ. և ատամնացուի
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՅ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԳԱԴՈՄՍԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒԼԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջլալին ց. (էլեկտրօտերապիա):
ԲԵՆԿԵՎՍԿԻ—7—8 ժամ.
Հիւանդանոցում են մանկաբարձուհիք՝ ԵՐԵԿԱՆԵԿԱՆ և ԱՐՄԱՂԿԱՆ
ՎՃԱՐ—50 Կ.: Համալսարանի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի փոխ-վերաւորաւ ԲՈՒԿՎՈՎՍԿԻ